

ՀԵՍԴ ՏԵՂԱՐԴՈՂՎՈՐԱՅ-ՀԱՅԱՆՑԱՐՈՎ

Ս. ՄԵԿՈՅԱՆ

ԱՆՏԱՌԱՆՑՈՒԹԵՐԻ
ՊԱՏՐԱՍՈՒՄՆ
ՈՒ
ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

634.9

563

U-37

Uthnyur II.

Thawunuyun oph yun
puusimSu m bnpuyuphi-

Sr: 1936.1n.

634.982.5

U-37

Ա. ՍԵԿՈՅԱՆ

ԱՄՈՒՋՎԱՐ Հ 1961 թ.

ԱՐՏԱԳԱՎՈՐ ՔԵՐԻ

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՓՈԽԱԳՐՈՒՄ



A 18598

I. ՓԱՅՏԱՆՅՈՒԹԸ ՅԵՎ ՆՐԱ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ԿԱԶՄԸ

Շառը կաղմված ե յերեք հիմնական մասից՝ արմատից, ընից (գերանի մասից) և ճյուղերից։ Առհասարակ ծառի բունը, համեմատած այլ մասերի հետ, ունենում է ամենաշատ փայտանյութը։ Բունը տարբեր ծառերի նկատմամբ կազմում է.

- ա) Բոխին մոտ $30-35\%$
- բ) Հաճարենին $40-50\%$
- գ) Կաղնին $50-60\%$
- դ) Հացենին $45-55\%$ և այլն։

Էավ ե համարվում ծառի այն բունը, վորն աճում է առողջ և ուղիղ։ Խիտ անտառներում ծառերն ավելի լավ վորակի փայտեղեն են տալիս, քան ազատ տարածության մեջ աճող ծառերը, վորոնք լինում են համեմատարար ցածր, ճյուղավորված և տալիս են ավելի վատորակ փայտեղեն։

Արմատները կաղմում են ամբողջ ծառի փայտանյութի $10-20\%$ -ը. անշուշտ այդ տոկոսը տարբեր ե լինում բարձր կամ քածր տարբեր տեսակի ծառերի նկատմամբ, իսկ ճյուղերը կազմում են փայտանյութի $15-25\%$ -ը։ Յեթե ծառի բունը հորիզոնական ձևով հատենք, կտեսնենք, վոր նա կաղմված ե 2 մասից՝ մուգ-կարմրավուն միջուկից և սպիտակավուն բնափայտից։ Միջուկի մուգ-կարմրավուն գույնը բացատրվում է նրանով, վոր նրա մեջ կա գարաղային և ինճային նյութ, վոր ծառին տալիս և մեծ ամրություն և կանխում և փառումը։ Ծառի բնափայտը, վոր դուրկ ե այդ հականեխիչ նյութերից, յենթակա յի սնկային հիվանդությունների և փառման։

Միջուկ ունեցող ծառերի խմբին են պատկանում՝ թեղին, սոճին, ինձորենին, տանձենին, թթենին, կաղնին, արջընկուղենին, հացենին, ընկուղենին։

Միջուկ չունեցողների խմբին են պատկանում՝ լորին, լայնատերենինին, բարդին, բոխին և այլն։

Հաճարենին պատկանում ե կեղծ միջուկ ունեցող տեսակների խմբին։

2. ՓԱՇԱՆԱՑՈՒԹԻՒՆ ԱՎԳՈՒՍՏԻ ՀԱՇԽԱՎԱԿԱՆ ՀԱՇԽԱՎԱԿԱՆ

Փայտի կշռի մասին պատկերացում ստանալու համար անհրաժեշտ է վորոշել նրա տեսակաբար կշռը: Փայտայի յութի տեսակաբար կշռը տարրեր ծառերի նկատմամբ հավասար է ըսլուն՝ $0,77^0/_{\circ}$ -ի, կաղնին՝ $0,70^0/_{\circ}$ -ի, հացենին՝ $0,64^0/_{\circ}$ -ի, լայնարևենին՝ $0,66^0/_{\circ}$ -ի, հաճարենին՝ $0,59^0/_{\circ}$ -ի, ուռենին՝ $0,48^0/_{\circ}$ -ի և այլն: Ի հարկեա կան ծառեր, վորոշ փայտանյութի տեսակաբար կշռը լինում է ցածր կամ բարձր: Կա կարգած է փայտանյութի կազմից և նրա մեջ յեղած պահպան նյութերից:

Առ կորվում յեզ ուստի չորացված տարրեր տեսակի ծառերի
փայտանյութի բաշր

| Մտերի տեսակները | 1 լր. մետր. քաշը կիլոդրամ: | |
|-----------------|----------------------------|--------------------------|
| | Կոր կորված փայտը | ողում չօրա- ցած փայտը |
| Կաղնի | 1040 | 760 |
| Լորիաներենի | 900 | 690 |
| Լորենի | 800 | 450 |
| Հացենի | 920 | 740 |
| Հաճարի | 950 | 720 |

Այս ողյուոյնելից լերպում է, վոր կորված ծառի փայտանյութի ավելի ծանր է, քան ողում չօրացածը: Դա բացատրվում է նրանով, վոր կորված փայտեղենը պարունակում է իր մեջ $45-50^0/_{\circ}$ ջուր: Փայտը միաժամանակ բացովից մնալով նրա մեջի ջուրը պոլորդիանում է, իջնելով մինչև $10-20^0/_{\circ}$:

Յրի զայրշիցաւը փայտանյութից տարրեր ժամանելու հետո:

Ժայրշիցաւը չը է փայտը չօրացածը նետ:

| Մտերի տեսակները | Ը ամայտ ժամ. | Մի տարրի ժամ. | ԵՅ տորդ ժամ. |
|-----------------|-----------------|------------------|-----------------|
| Կաղնի | 29 | 23 | 20 |
| Առենի | 29 | 18 | 15 |
| Դեզի | 25 | 18 | 16 |
| Կաղամարի | 31 | 21 | 15 |

Հիշուած աղյուսակից լերիում է՝ փայտը կորվելոց հետևողը յերկար և անում անտառում, չոր պայմաններում, այնքանուրու միջի:

ջուրն ավելի շատ և զոլորշիանում, իջնելով 50-ից $15^0/_{\circ}$ -ի և չորսնում ու պիտոնի յեղանում զործածության համար։ Թեպետ հաճարենու ու բոխենու մասին ճշգրիտ ավյալներ չկան, բայց և այնովեւ փորձը ցույց է ավել վոր այդ ծառերը կարելուց հետո մի տարի անտառում մալով կորցնում են իրենց ջրի $^{0}/_{0}$ ը, իջեցնելով ջրի $^{0}/_{0}$ 20—22-ի։

Յ. ՓԱՅՏԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՏԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փայտանյուրի ամրությունն այն հատկությունն է, չերք նողիմադրում և արտաքին զանազան ուժերի։ Փայտանյութի ամրությունը վրա ազդում են ավյալ ծառատեսակի անտառի ականական կաղմը, ջրի տոկոսը, ծառի տարիքը, աճման պայմանները և այլն։

Հասունացած փայտանյութն ավելի ամուր է, քան ծերացածք կամ չհասունացածը, փայտի մեջ լեզած խոնավությունը 30—40 տոկոս իջեցնում է նրա ամրությունը։

Բայց ամրություն ծառերը բաժանվում են.

ա) ամուր վորպես քար՝ սև ծառ։

բ) ամուր վորպես վրուկոր՝ կծովսուր, սամշիտ։

գ) շատ ամուր՝ սղնի, հոն։

դ) ամուր՝ տանձենի, խնձորենի, կաղնի, լայնատերենի, համարենի, բոխենի։

ե) փափուկ փայտանյութ ունեցող ծառերի դասին են պատկանում սոճին, ոռենին, բարդին և այլն։

ՓԱՅՏԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԱՑՆԵՐԸ

Փայտանյութի արտաներն առաջ են զոլիս զանազան պատճեններից՝ ծառի անոնրմալ անուժից, փայտի մեխանիկական գոտովածքներից, բակարիաների ու սնկերի կողմից հասցված գոտներից և այլն։

Փայտանյութն առնի հետեւյալ արտաները.

Յ. ՄԱԼԻ ԲՆԻ ՄՈՍՈՎԱՇՈՒՅՈՒՆ

Մարի բունը կարող է լինել ծուխոված զանազան ուղղության։ Յեթի զա չնուին և վոչինչ, իսկ լեթե մեծ է, հաճարվում է խոռոչն (բբակ), վերը ողոցելիս տալիս է շատ քիչ սղոցանյութ։

Սա փայտանյութի այն արատն է, յերբ փայտանյութի հյուսվածքներն ունեն պտուտակային ձև։ Հիշյալ արատը հաճախ ունենում են այն տեսակ ծառերի փայտանյութերը, վորոնք աճում են աղատ միջավայրում և քամիների ու լույսի արակողմանի ներգործման տակ են։ Թեքաշերտության նշաններն են՝ գերանի, կեղենի և փայտանյութի վրա տարածվող ծուռ ձեր ճեղքածքները (նկ. 1)։

Թեքաշերտություն ունեցող փայտանյութը համարվում է վաշ պիտանի և անպեսք և սղոցման համար։



Նկ. 1. Փայտանյութի ճեղքածքները



Նկ. 2. Փայտանյութի հյուսվածքների ալիքածեռները

Դ. ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ԱԼԻՔԱԶԵՎՈՒԹՅՈՒՆԸ

Արատի այս տեսակը բնորոշ է փայտանյութի հյուսվածքների ալիքավորության (նկ. 2) համար։ Այս փայտանյութից չեկարելի պատրաստել տակառներ և այլ կահկարստիք։ Ալիքածեռարատ ունեցող փայտանյութը կարելի յեզ զործածել միայն վորոպես գերան։



Նկ. 3. Փայտանյութի ճեղքածքները գտնվում են մի ուղիղ գծի վրա

Դ. ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՃԵՂՔԱՄԲՈՒՅՐԸ

Փայտանյութի ճեղքածքներն առհասարակ առաջ են գալիս զանազան պատճառներից (մեխանիկական հարվածներից, ջերմության խիստ տատանումներից)։ Ճեղքածքները լինում են տարբեր մեծաւթյան լեթե ճեղքածքները գերանի վրա զատ են և խորը, այդպիսի գերանները համարվում են խոտան վտանգավոր են համարվում, յերբ ճեղքածքներն սկսվում են փայտանյութի միջուկից և տարածվում տարբեր ուղղությամբ, հասնելով մինչև կեղեն։ Ցերը միջուկից տարածված ճեղքածքները գտնվում են

մի ուզիղ գծի վրա (նկ. 3), այդ դեպքում փայտանյութի վորակն այնքան ել չի իջնում, վորովհետև հմտորեն սղոցելիս հիշյալ փայտանյութից կարելի յե լավ սղոցանյութ ստանալ։ Վտանգագոր են համարվում, յերբ ճեղքվածքներն անկյուն են կազմում կամ տարածված են պտուտակաձև։ Վորովհետև այդ տեսակի փայտանյութից հնարավոր չե լավ վորակի սղոցանյութ ստանալ, ոգտագործվում ե փայտամշակման յերկրորդական կարիքների համար։ Փայտանյութի հիշյած ճեղքվածքները լավ յերեսում են գերանների հաստ գլխից։ Բացի այդ ճեղքվածքներից, կա նաև ցռահարուրյան ճեղքվածք, վորն առաջ ե գալիս ծառի խիստ ցրտահարությունից (նկ. 4)։ Ցրտահարության ճեղքվածքները հետագայում լցվում են նոր աճած շերտերով և ծառի վրա կազմում այսպես կոչված ուղղահայաց ուռուցքներ (լունդեր)։ Լունդերն առաջ են գալիս ուրիշ պատճառներից։

Ն. ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ԱՐԱՏՆԵՐ, ՎՈՐՈՆՔ

ԱՌԱՋԵՆ ԳԱԼԻՍ ՍՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՈՒՆՆԵՐԻՑ

Փայտանյութի փտելն առաջ և զալիս զանազան սնկային հիվանդություններից, վարոնց զարգացմանը նպաստում և խոնավությունը։

Սնկային հիվանդությումը հիվանդացած փայտանյութը բոլորովին փոխում ե իր արտաքին դռւյնը, հոտը, ամրությունը և տեխնիկական հատկությունները։ Փտել կարող են արժատը, բունը և ճյուղերը, նայած վորտեղ են դանվում մնասատունները։ Ծառն ամենամեծ մնասն ստանում ե այն դեպքում, յերբ սնկային հիվանդությունն սկսում է տարածվել արմատներից և բարձրանում և դեպի բունը, վորովհետև ծառի բունը համարվում ե ամենաթանգարժեքն ու սիրտանին՝ արդյունաբերության համար։ Փտած ծառն արտաքինից կարելի յե ճանաչել նրա վրա յեղած փոտած ճյուղերից, բնից և արմատների բների վրա յեղած սնկերից։ Ինչքան կտրած գերանը չոր և, այնքան նա քիչ ե յենթակա սնկային հիվանդությունների և, ընդհակառակը, գերանը վորքան շատ խոնավություն և պարունակում իր մեջ և շրջապատված ե



Նկ. 4. Ցրտահարության ճեղքվածք

խոնավ միջավայրով, այնքան նա ավելի յենթակա յե հիվանդությունների ու փտման։ Մեր ծառատեսակներից հաճարենին և կաղնին ամենից շատ են յենթակա մարմարային փտման։

Այդ տեսակետից խոշոր նշանակություն ունի գերանի կտրելուց հետո նրա հետագա պահպանումը։ Սնկային հիվանդությունների դեմ պայքարելու, ինչպես նաև փայտանյութի դիմացկունությունը պահպաննելու նպատակով՝ գերանի մեջ որսկում են հականեխիչ նյութեր՝ կրիոզոտ, խլորցինկ, սուլեմա և այլն։ Վերը թված հականեխիչ նյութերը յերկաթդժի կոճափայտի (շպալների) մեջ որսկելիս նբանց դիմացկունությունը յերկուսից—յերեք անգում բարձրանում եւ Բացի փայտանյութի հիշյալ արատներից և հիվանդություններից, կան նաև այլ տեսակի արատներ. այսպես, որինակ՝ ծառի ծայրի չորություն, լերբ ծառի ծայրի ճուղերն ամբողջովին չորանում են, կամ յերբ ամբողջ ծառն և չորացել (չորացած ծառ) և այլն։

Բացի բերած որինակներից, գոյություն ունեն ծառերի մի շարք այլ հիվանդություններ ու արտաներ։

II. ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Ինչպես կոճդի վրա չեղած ծառերի, այնպես և կտրված գերանների չափման միավորը համարվում եւ խորանարդ մետրը։ Փայտեղենի հաշվառման ընագավառում դոյություն ունի խտացրած յեվ վաշ խտացրած խոր. մետր։ Դերաները և շինափայտի ասորտիմենտները հաշվի յեն առնվում խտացրած խորանարդ մետրներով։ Վառելափայտը և մանր ճյուղերը չափվում եւ հաշվի յեն առնվում դարսված խոր. մետրով (վոչ խտացրած խոր. մետրներով)։ Որինակ՝ յեթե վերցնենք ջարդած և դարսված վառելափայտը, վորումի մեկ մետր յերկարություն, մեկ մետր բարձրություն և մեկ մետր լայնություն, կստացվի մի խորանարդ մետր դարսված վառելափայտ։ Դարսված խորանարդ մետր եւ կոչվում, վորովինեան ջարդված վառելափայտն իրար վրա դարսվելիս առաջ են դալիս դատարկ տարածություններ։ Դերանը չափելիս ստացվում եւ խտացրած խորանարդ մետր, քանի վոր գերանի մեջ փայտանյութը խիտ մասսա յե կաղմում։ Խտացրած խորանարդ մետրը վոչ խտացրածի վերածելու համար անհրաժեշտ եւ խտացրած խորանարդ մետրի քանակը բազմապատկել 1,43-ով (վերածման գործակից)։ Որինակ՝ խտացրած 100 խորանարդ մետր փայտեղենը վոչ խտաց-

բածի (դարսածի) վերածելու համար անհրաժեշտ է $100 \times 1,43$ -ով, վոր հավասար կլինի 143 խոր. մետր վոչ խտացրած փայտեղենի: Վոչ խտացրած խորանարդ մետրը խտացրածի վերածելու համար անհրաժեշտ է վոչ խտացրած խորանարդ մետրի քանակը բազմապատկել $0,7$ -ով (վերածման գործակից): Որինակ՝ վոչ խտացրած 100 խոր. մետր փայտեղենը խտացրած խորանարդ մետրի վերածելու համար անհրաժեշտ է $100 \times 0,7$ -ով, վոր հավասար է 70 խոր. մետր խտացրած փայտեղենի:

Այսպիսով, ունենալով ձեռքի տակ հիշյալ վերածման դործակիցները ($1,43$ և $0,7$) և փայտանյութի քանակը՝ հեշտությամբ կարելի յե վերածել մեկը մյուսի: Կոճղի վրա յեղած ծառերի փայտանյութի քանակը վորոշելու համա հատուկ գործիքով, վորը կոչվում է չափման վիճկա, չափում են ծառի բունը (1, 3 մմ գետնից բարձր) և հատուկ աղյուսակներով (տես վերջում) վորոշում փայտանյութի ընդհանուր քանակը: Տարբեր ծառերի փայտանյութի քանակը վորոշելու համար գոյություն ունեն հատուկ աղյուսակներ. այսպես, որինակ՝ սոճու, կաղնու, հաճարի և այլն: Կտրած գերանի փայտանյութի ընդհանուր քանակը վորոշելու համար չափում են գերանի բարակ-ծայրի յերկարությունն ու աղյուսակի միջոցով գտնում նրա ընդհանուր փայտանյութի քանակն առանց կեղենի. այսպես, որինակ՝ յեթե գերանի յերկարությունը հավասար է հինգ մետրի, իսկ բարակ գլուխն ունի 30 սանտիմետր հաստություն, այդ գերանի ընդհանուր փայտանյութի մասսան կլինի $0,426$ խոր. մետր, Զարդված ու շտարել (կույտով) դարսված վառելափայտի ամրող քանակը (խոր. մետրերով) վորոշելու համար պետք է բազմապատկել շտարելի յերկարությունը, լայնությունն ու բարձրությունն իրար վրա: Այսպես, որինակ՝ յեթե ունենք մի շտարել, վորի յերկարությունը հավասար է 14 մետրի, բարձրությունը՝ 2 մետրի և լայնությունը՝ յերկու մետրի (կամ, ինչպես ասում են, յերկու մետրանոց փայտ), այդ շտարելի վառելափայտի ընդհանուր քանակը կլինի $14 \times 2 \times 2$ հավասար է 526 խմ-ի. ուրիշ որինակ. շտարելի յերկարությունը հավասար է 9 մետրի, բարձրությունը՝ 3 -ի, լայնությունը՝ 1 -ի (կամ, ինչպես ասում են, փայտը մեկ մետրանոց է) այդ շտարելի ընդհանուր քանակը կլինի $9 \times 3 \times 1$, վորը հավասար է 27 խոր. մետրի:

Վառելափայտի չափման վերը հիշված ձեւը շատ պարզ է, և

վոչ միայն փայտապատրաստման տասնապետաները կամ բրիդադիրները, այլև յուրաքանչյուր կոլտնտեսական կարող և այդ հաշվառումը հեշտությամբ կատարել:

1. ՓԱՅՏԵՂԵՆ ԶՈՒԾԻՔՆԵՐԸ

Փայտեղենը չափում են չափող յերկճանկով (վիլկա), չափալարով (ոռւլետկա) և այլ գործիքներով:

ա) Չափող յերկնանկ.— Կոճղի վրա կանգնած ու կտրված ծառերի հաստությունը (տրամագիծը) չափում և չափող յերկճանկով: Չափող յերկճանկը կազմված է հաստ քանոնի մոտ մի մետր յերկարության բաժանված սանտիմետրների մասից և յերկու վոտքից: Յուրաքանչյուրը մոտ $\frac{1}{2}$ մետր է:

Վոտքերից մեկն ամրացած է քանոնին և անշարժ է, իսկ մյուսը շարժվում է քանոնի յերկարությամբ: Ծառի կամ գերանի հաստությունը չափելու համար չափող յերկճանկի քանոնն ամուր մոտեցնում են գերանին կամ ծառի բնին և շարժական վոտքի միջոցով չափում հաստությունը:

բ) Չափալար.— Վառելափայտի շտարելների, կտրած ծառերի ու գերանների յերկարությունը չափում և չափալարերով: Վառելափայտի շտարելի յերկարությունը չափալարով չափում են հետեւյալ ձևով. չափալարի ծայրի մասը, վորտեղ կա յերկաթե ողակ, ամրացնում են շտարելի մի ծայրին և չափալարը բաց անելով՝ տանում են մինչև շտարելի մյուս ծայրը և նայում են չափալարին, վորտեղ նշանակված են սանտիմետրներ և մետրներ, և վորոշում շտարելի յերկարությունը: Շտարելի բարձրությունը չափելու համար չափալարի ծայրն ամրացնում են դետնին, իսկ մյուս ծայրը բարձրացնում վերև ու չափում շտարելի բարձրությունը: Իսկ շտարելի լայնությունն իմանալու համար չափում են շտարելի լայնությունը և բազմապատկելով այդ յերեք տվյալները՝ ստանում են վառելափայտի շտարելի ընդհանուր քանակը խոր մետրներով: Չափալարով կոճղի վրա կանգնած ծառերի հաստությունը (տրամագիծը) չափելու համար չափում են նրա տրամագիծն ու բաժանում յերեքի վրա: Չափալարով չափում են նաև գերանի յերկարությունն ու բարակ գլուխը:

Գերանների ու ծառերի տրամագիծը չափում են ամբողջ սանտիմետրներով, յեթե գերանը չափելիս ստացվում է 0,5 կամ 0,25 սանտիմետր, այդ դեպքում կեսից ցածը հաշվի չի առնվում, իսկ կեսից բարձր ընդունվում են վորպես ամբողջ սանտիմետր:

2. ՓԱՑՏԱՆՑՈՒԹԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԶԵՎԵՐԸ

Անտառում, պահեստում, կամ մի այլ կետում պատրաստված դերանները կամ շինափայտը հաշվի յեն առնվում ըստ ծառերի տեսակների (հաճարի, կաղնի, սոճի, բոխի, լայնատերևենի և այլն) և ըստ առանձին չափսերի։ Դերաններն իրար վրա գառավորելիս անհրաժեշտ ենք արանքները դնել փայտի փոքրիկ կտորներ՝ իրարից անջատ պահելու և քամահարություն ստեղծելու նպատակով։ Յուրաքանչյուր գերանի հաստ գլխի կտրվածքի վրա ներկով, կամ հատուկ գունավոր մատիտով դրվում են գերանի յերկակությունը (համարիչ) և բարակ ծայրի հաստությունը (հայտարար)։ Յերկաթգծի շպալաները, բահերի ու քլունգների կոթերը, անիմսերի սպիցները, որուտները հաշվի յեն առնվում մնամասն հատով։ Փայտի մշակումից մնացած մանր ձյուղերը և մնացորդները հաշվի յեն առնվում խոր. մետրներով՝ առանձին խրձերով, դեղերով կամ սայլերով։

III. ԱՆՏԱՌԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԷՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՎԵՅ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐՆ ԱՆՏԱՌ- ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Փայտեղենը խոշոր նշանակություն ունի ԽՍՀՄ ամբողջ եկոնոմիկայի համար և գործածվում է մեր ժողովրդական տնտեսության ամենաանհրաժեշտ կարիքների համար (կոմունալ շինարարության, ծանր արդյունաբերության, գյուղատնտեսության, քիմիական արդյունաբերության և այլն)։ Վառելափայտը կազմում է մեր յերկրի վառելանյութի պահանջի մոտ 35% -ը։ Շինափայտը և այլ ասորտիմենտները, վորպես եքսպորտ, դրավում են կարեոր տեղերից մեկը։ 1930 թվին տնտառային արդյաւնաբերությունը ԽՍՀՄ-ում տվեց յերկրին 180 միլիոնի ինվուստրացման վալյուտային ֆոնդ։ Դեռ առաջին հնգամյակում առաջարկվեց անտառաշահագործման բնագավառում արտադրական պրոցեսների մեխանիզմների կատարել, կիրառել աշխատանքի սոցիալիստական ձևեր և այլն։ Անտառային արդյունաբերությունն առաջին հնգամյակում իր բոլոր ձյուղերում տվեց բարձր ցուցանիշներ։

Պլանների կատարման վերաբերյալ ընկ. Ստալինն ասում է.
«Մեր արտադրական պլանի իրական լինելը՝ դա միլիոնավոր
աշխատավորներն են, վոր նոր կյանք են ստեղծում. Մեր ծրագրի
իրական լինելը՝ դա կենդանի մարդիկ են, դա մենք ենք ձեզ
հետ միասին, մեր կամքն ե՝ աշխատելու, մեր պատրաստակամու-
թյունը՝ նոր կերպ աշխատելու, մեր վճռականությունը՝ պլանը
կատարելու»:

Յելնելով ընկ. Ստալինի տված դրույթից՝ անհրաժեշտ ե
լիքանքում կիրառել նրա տված հետևյալ 6 ցուցչունքն անտա-
ռացին արդյունաբերության դործում.

ա) անհրաժեշտ ե ճիշտ կազմակերպել բանվորների հավա-
քաղրման գործը, վերացնելով գոյություն ունեցող ինքնահոսք:
Այդ գործում խոշոր դեր ունեն կատարելու կոլտնտեսությունները,
վորոնք պետք ե ապահովեն փայտապատրաստմամբ դրազվող կազ-
մակերպությունների պահանջը բանվորական և քաշող ուժով։ Հի-
շալ աշխատանքներն անհրաժեշտ ե տանել կազմակերպված ձեռվ,
կնքելով կոլտնտեսությունների վարչությունների հետ համապա-
տասխան յերկեղությանի պայմանագրեր։ Կոլտնտեսությունների այն
վարչությունները, վորոնք կազմակերպված են փայտամշակման աշխա-
տանքների հետ, պարսավոր են՝ համաձայն գոյություն ունեցող
որենքների (ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների խորհրդի
1933 թվի նոյեմ. 13-ի վորոշումը)՝ իրենց կոլտնտեսության ար-
տադրական պլանները կազմելիս հաշվի առնել փայտի պատրաստ-
ման ու փոխադրման գծով պահանջվող բանուժի և քաշող ուժի
քանակն ու այն մտցնել կոլտնտեսության ոլլանի մեջ, ըստ
առանձին յեռամսյակների։

բ) փայտապատրաստման աշխատանքները կազմակերպել
ստախանովյան մեթոդով, կիրառելով աշխատանքի լրիվ բաժա-
նում և բարձրացնել փայտահատի արտադրողականությունը.

գ) ամրացնել փայտապատրաստման տնտեսությունների
ֆինանսական դրությունը, անցկացնելով նրա աշխատանքները
լրիվ տնտհաշվարկի։

դ) ճիշտ կազմակերպել աշխատանքն անտառում, լիովին
անցնելով բրիգադային ձեի։ Ճիշտ դասավորել յեղած բանվորա-
կան ձեռքերն արտադրության մեջ, պատասխանատու դարձնելով
լուրաքանչյուր աշխատողի իր աշխատանքի համար։ Պահանջել
փայտահայտից, դումակի վրա աշխատող սայլապանից ու տնտե-

սության այլ բնադափառում աշխատող բանվորներից, վորպեսզի նրանք հոգատար վերաբերմունք ունենան դեպի իրենց հանձընկած ինվենտարը (կացին, սղոց, մեքենաներ, քաշող ուժ և այլն)։

ե) գործարքային պրոգրեսիվ-պարզեցման աշխատանքների միջոցով վերակառուցել բանվորների, տասնավետների ու բրիգադիրների աշխատանքի վարձատրման սխառեմը, վերացնելով անտառաշահագործման տարրեր ողակներում մինչև հիմա գոյություն ունեցող աշխատավարձի հավասարեցումը։

դ) պատրաստել արտադրության համար նոր կաղրեր, սկսած փայտահատ բանվորներից մինչև անտառաշահագործման կետի դիրեկտորը։ Կազմակերպել անտառարդյունաբերության միջին կաղրերի համար դասընթացներ (մեծ մասամբ արտադրության մեջ), հրատարակել մատչելի բրոշուրներ, ձեռնարկներ, պլակատներ՝ անտառաշահագործման տարրեր ճյուղերի վերաբերյալ։ Պրոֆմիութենական կազմակերպությունները պարտավոր են ակտիվ կերպով ոգնել փայտապատրաստմամբ գրադիոզ կազմակերպություններին՝ կյանքում կիրառելու հիշյալ աշխատանքները, տանելով փայտապատրաստման աշխատանքները ստախանովյան մեթոդներով։

1. ԱՆՏԱՌԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՅԵՎ ՆԻՇԱ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Նախքան փայտի հատման աշխատանքներին անցնելը (ծառերի կտրելն ու գերանահատելը), անհրաժեշտ ե այդ ուղղությամբ տանել վորոշ նախապատրաստական աշխատանք, այն եւ.

ա) ապահովել հատատեղերի ծառակնքման աշխատանքները։ Ծառակնքման աշխատանքներն անտառաշահագործման մեջ համարվում ե պատասխանատու աշխատանքներից մեկը, վորովհետև հատատեղերի հատով և ժամանակին կատարումից ե կախված մեծ մասամբ փայտապատրաստման պլանների կատարման ու գերակատարման քանակական ու վորակական աշխատանքները. այսպես, որինակ, յեթե մի վորեն վայրում հատկացված ե 5—10 ծառ և այդ 10 ծառի համար տասնապետը պետք ենախագծի մեկ կիլոմետր անտառուղի անցկացնել՝ ծախսելով 10.000—15.000 ռ., այդպիսի ձեի հատատեղերի կնքման աշխատանքներից անտառաշահագործման ձեռնարկությունը, կասկածից դուրս ե, մեծ զսաս կկրի։ Հատատեղերի կնքման աշխատանքները հանձնարարում են

տվիկի հմաւում և փորձված անտառային մասնագետների, վորոնք
և կատարում են այդ աշխատանքները՝ ղեկավարվելով հատուկ
հրահանգներով և հաշվի առնելով անտառային տնտեսության
և անտառաշահագործման մի շարք այլ մոմենտներ։ Մառակնքման
աշխատանքները կատարելիս կազմակերպվում են այսպես կոչված
հատատեղերի հատկացման հատուկ խումբ՝ բաղկացած անտա-
ռագետից և անհրաժեշտ քանակությամբ բանվորներից, վորոն-
ցից մեկը չափում են ծառը, յերկրորդը՝ դրոշմում են (հատուկ դրոշ-
մով), յերրորդը՝ համարակալում, իսկ չորրորդը՝ տաշում։ Անտա-
ռագետը կատարում է ծառի ընտրություն և ցույց տալիս
դրաշմելու ձեր։ Միջին հաշվով մի այդպիսի խումբ չոթը ժամկ-
ժնթացքում կարող է կնքել 200—250 ծառ։

բ) վերանորոգել անտառուղիները, բանվորական բարակ-
ները, գոմերը և այլն.

գ) սրել տալ սղոցները, կացինները և փայտի հատման հա-
մար պահանջվող անհրաժեշտ դործիքները, (սեպերը խոր-
ուցները).

դ) ապահովել մատակարարման դործը։


2. ՓԱՅՏԻ ՀԱՏՈՒՄԸ ՅԵՎ ԿՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Շառը հատում են կացնով ու սղոցով։ Միայն կացնով ծառը
հատելիս ծառի բնի վրա առաջանում ե փոս (նկ. 5), ու կարոծ



նկ. 5. Մրմիւյն կացնով հատած ծառի բնի վրա առաջ յեկած փոսը
պերտնի հաստ, ամենաթանդարժեք ու պիտանի մասը մինչև կես
մետր (հաճախ մի մետր) փչանում ե։ Այդ կորուստը կազմում է
ամբողջ դերանի 7—8 տոկոսը։ Բացի դրանից, մեզ մոտ ծառերը

հատելիս շատ բարձր բուն ենք թողնում (մոտ 50—70 սանտի-
մետր բարձրությամբ) և ընի վրա թողնում անողողագործեցին
30—40 սանտիմետր փայտանյութ. դա նույնպես կազմում է
ամբողջ գերանի մոտ 5—6 տոկոսը։ Հատման վատ ձևերին ողեաք
և դասել նաև մեզ մոտ շատ տարածված ծառերի հատումը, յերշ-
ծառը կտրելիս մի կողմից քիչ կտրում են կացնով. հետո հակա-
ռակ կողմից շատ դժվարությամբ շուռ են տալիս այն։ Ծառը
վայր ընկնելիս տալիս և խոշոր ճեղքվածք ընի ուղղությամբ
մեկից յերկու մետր յերկարությամբ և մոտ մեկից յերկու մետր
լավորակ փայտ և փշանում (նկ. 6). Այդ կորուսով կազմում ե-



Նկ. 6. Միմիայն կացնով հատելու ժամանակ շինտվայտի փշացման դեղիքը

գերանի մոտ տաս տոկոսը. այսպիսով անտառարդյունաբերու-
թյունը ծառերի վոչ ուացիոնալ հատելու դեղքում կորցնում է
յուրաքանչյուր ծառի մոտ 20—22 տոկոսը։ Այսպիս, որինակ,
յեթե 1936 թվին Հայաստանի անտառներից պետք է հատվի
մոտավորապես 75.000—100.000 ծառ և յուրաքանչյուր ծառից
կորչի նրա գերանային մասից մոտ 20 տոկոս, դա կկազմի փառ-
տացի բաց թողնված շինափայտի մոտ $\frac{1}{5}$ -ը մասը, վոր, ի հարկե,
չպետք է հանդուրժել։ Թե ԽՍՀՄ-ում և թե արտասահմանում
ծառի համար անենառացիոնալ ձեր պետք է համարել այն, յերբ
ծառը հատում են կացնով ու սղոցով միաժամանակ, Ծառերի այդ
ձեր հատումը կատարում են հետեւալ կերպ՝ ծառի այն կողմից,
վոր կողմը ցանկանում են դցել ծառը, կացնով հատում են նրան
այն բարձրության, վորքան հաստություն ունի ծառի բունը,
այնուհետեւ սղոցով հակառակ կողմից, կացնով՝ կտրվածքից միքել
բարձր, ամբողջապես կտրում են այն (նկ. 7, 8, 9). Հատման

այս ձեւը պետք է համարել լավ և ուսցիոնալ այն պատճառով,
վոր հիշյալ ձեի հատման ժամանակ հնարավոր ե լինում.

ա) ծառն ավելի ցածրից կտրել.



Նկ. 7. Միմիայն կացնով հատված ծառը

- բ) զերծ պահել ծառը ճեղքվածքներից ու փչացումներից.
դ) համեմատաբար քիչ ենթգիտ թափել ծառի հատման վրա
և բարձրացնել փայտահատի արտադրողականությունը.
դ) ունենալ փայտեղների մեծ տնտեսում ու արագացնել աշ-
խատանքները:



Նկ. 8. Կացնով և աղոցով հատված ծառը

Անհրաժեշտ է ասել, վոր
հիշյալ ձեի հատումը, վորն
ունի մեծ առավելություն-
ներ հանդես մինչեւ այժմ ս
լեզած հատման ձևերի, պետք
ե կիրառել մեր առօրյա աշ-
խատանքներում, անտեսելով
շինափայտի այն կորուսաը,
վոր ստացվում եր փայտի
վատ հատման հետևանքով:
Ծառերի հատման ժամանակ
պետք ե սուր պահել զոր-
ծիքները (սղոցները, կա-
ցինները): Փայտահատման զործիքների սուր լինելու դեպքում
թե բանվորի արտադրողականությունն և բարձրանում և թե նրա
աշխատանքը հեշտանում ե: Ծառի հատման համար գործածվող
կացինը պետք ե ունենա բարակ բերան և մեկուկեսից—յերկու
կգ ծանրություն: Կոթը պետք է լինի քիչ ծուռը՝ 80—90 սանտի-
մետը յերկարությամբ (Նկ. 10): Կան նաև ուրիշ տեսակի կա-
ցիններ, վորոնք ոգտագործվում են փափուկ ծառատեսակների

համար. այդպիսիները մեր ամուր տեսակի ծառերի հատման գործում այնքան ել պիտանի չեն. Ծառ կտրելու սղոցները պետք է պատրաստված լինեն լավորակ պողպատից: Դրանց յերկարությունը պետք է լինի մեկից մեկուկես անոր: Լինում են նույ



Նկ. 9. Ծառի բնի թեք կտրվածք

ուրիշ տեսակի սղոցներ, բայց ավելի յերկար կամ կարճ սղոցները ծառի հատման գործում լավ չեն աշխատում: Սովորական սղոցներից ամենալավը պետք է համարել «լուզովի» սղոցը: Բացի սովորական սղոցներից, ծառերի հատման համար թե ԽՍՀՄ-ի տարրեր անտառաշահագործման շրջաններում և թե արտասահմանում գործ են ածում մեքենայացված սղոցներ: Գոյություն ունեն մի քանի սիստեմի մեքենայացված սղոցներ՝ «Ռինկո», «Շտիլ», «Դոլմար», «Յերկո» և այլն Այդ սղոցներն աշխատում են մոտոռներով և ունեն հետևյալ ծանրությունը.

- | | | |
|-------------|----|----------|
| ա) «Ռինկո» | 38 | կիլոդրամ |
| բ) «Շտիլ» | 65 | » |
| գ) «Դոլմար» | 45 | » |
| դ) «Յերկո» | 54 | » |



Նկ. 10. Փայտահատման կացիններ

Լինինգրադի անտառային հետազոտական ինստիտուտի կողմից կատարված բաղմաթիվ փորձերը ցույց են տվել, վոր մեքենայացրած սղոցները լավ են կտրում միմիայն փափուկ այնպիսի ծառեր, ինչպիսին են՝ սոճին, բարդին, կաղամախին, իսկ ամուր ծառերի՝ կաղնու, հաճարենու, բոխու և այլն նկատմամբ նրանց աշխատանքն այնքան ել արդյունավետ չե: Բայց և այնպիս պետք է այդ սղոցները փորձել և նրանցից ընտրել այնպիս



վորոնք համապատասխանում են մեր ծառատեսակներին։ Այժմ
մեր հարեան Վրաստանի վայսապատրաստման մի քանի շրջան-
ներում զործ են ածում այդ տիպի մեքենայացված սղոցները
միմիւյն վագուկ ծառերի համան համար։ Վորովեսպի ծառի
համան աշխատանքները հաջող ընթանան, անհրաժեշտ ե ապա-
հագել վայսապատաներին ուժուղակող նյութերով, այնուհետեւ սեպերով



Նկ. 11. սղոցի
առանձին ուղղող
դորձիք

(վալու ջարդելու համար), սղոցներն ու կացին-
ները սրելու խարսոցներով, քարերով և այլն
(Նկ. 11). Հիմնականում արտադրության մեջ
քաշելով նոր տեսակի կատարելագործված սղոց-
ները՝ պետք է տիրապետել նրանց ողտագործման
տեխնիկային, միաժամանակ ասցիսալ ու նորա-
տականաբարմար կերպով ողտագործելով սովորական
սղոցներն ու կացինները։ Համամիութենական ան-
տուժողկում ընկ. Լորովք վայսապատաների կոնֆե-
րենցիալում տեղ է. սկացինների և սղոցների
ուոր ու պատրաստ լինելուց և կախված վայսա-
պատաների աշխատանքի արտադրողականության
բարձրացումը։ Ընկ. Լորովք առաջ խոսքերն իրա-
կանանում են կյանքի փորձերով, և բազմաթիվ
անտառային գիտահետազոտական հիմնարկների
տվյալներն այդ ողղությամբ մեզ ապացուցում
են, թե ինչ մեծ չափով բարձրանում է վայսա-
պատաների աշխատանքի արտադրողականու-
թյունը, լեռը նրա դործիքները ուոր են լինում։

3. ԳԵՐԱԿԱՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Մասք կտրելուց և վայր զցելուց հետո անհրաժեշտ ե այն
պերանահատել, այսինքն՝ կտրել նրա ճյուղերը, դուրս բերել զե-
րանի մար, առանձացնել վառելափակը և այլն։ Անհրաժեշտ ե
տաել, վոր զերանահատման աշխատանքները, համեմատած անտա-
ռապատրաստման այլ աշխատանքների հետ, համարվում են ամենի
բարդ աշխատանք ու պահանջում են զերանահատից հատուկ ձևա-
նազիտություն և վորակ։ Դոյլություն ունեն յերեքից վեց ամսվա
հատուկ դասրնթացներ, վորտեղ ուստանողներին սովորեցնում են
զերանահատությունը զերարերող զիտելիքներ։ ԽՍՀՄ-ի վայ-
սապատրաստման տարրեր շրջաններում վորով զերանահատ

ընդունում են միմիայն դասընթացներն ավարտած և զերանահատության ուղղությամբ վորոշ դորձնական փորձ ձեռք բերող մարդկանց։ Մեզ մոտ՝ Հայաստանում ես անհրաժեշտ և ունենալ այդ զերանահատության դասընթացներն ու պատրաստել նոր լագրեր։



Վորովեսպի զերանահատը ծառը կտրելուց հետո ոկոփի իր զերանահատման աշխատանքները, նու պետք եւ ստանա այսպիս կոչված տեխնիկական ցուցմունքներ, վոր արվում են նրան փայտապատրաստման շրջանի կողմից։ Տեխնիկական ցուցմունքներում զրվում ե, թե ինչ չափուերի ե վորակի զերաններ կամ այլ տարրիմենուներ ե հարկավոր զերանահատել արտադրության համար, ցուց տալով չափոր։ Ունենալով իր ձեռքի տակ հիշյալ տեխնիկական ցուցմունքները՝ զերանահատ մասնագետը նախորոք մանրամասնորեն ուսումնասիրում է այն և հետո անցնում իր աշխատանքներին։ Գերանահատ մասնագետի ամրող փորձությունն ու վարպետությունն այն ե, վոր նու կտրողանու կտրած և վայր զցած ծառից բարձր տոկոսի շինափայտ ե մատերիալ ստանալ։ Գոյություն ունեն զերանահատության տարրեր մեթոդներ, ծանոթանանք դրանց հետ։ Յենթադրենք՝ ունենք մի զերան, վորի յերկարությունը հավասար է 21,8 մետրի, հաստությունը (արամագիծը)՝ 35 սանտիմետրի, իսկ բարակ պլուխը՝ 15 սանտիմետրի։ Ըստ արված սովորիֆիկացիայի կամ տեխնիկական ցուցմունքների, պետք ե պատրաստել զերաններ 4,5, 6,5, 8,5 մետր յերկարությունը։ Այդ զերանը կարելի յե զերանահատել յերկու ձեռք։

ա) կամ կարելի յե ստանալ մի զերան՝ 8,5 մետր յերկարությունը և մի զերան՝ 4,5 մետր յերկարությունը — հավասար 21,5 մետրի։

բ) կամ կարելի յե ստանալ յերկու զերան՝ 8,5 մետր յերկարությունը և մի զերան՝ 4,5 մետր յերկարությունը — հավասար 21,5 մետրի։

Ինչու յերեւած և վերերերված որինակներից, հիշված յերկու ձեր զերանահատման միջոցով ել ապահովվում է ծառի շինափայտի ըրիվ սպազործումը։ Կարելի յե նույն ծառը զերանահատել այլ յերեւած ստանալ յերեք զերան՝ 6,5 մետր յերկարությունը, վոր հավասար է 19,5 մետրի, և կորցնել 2,3 մետր շինափայտ։ Անհրաժեշտ է տնել, վոր չառ դեպքերում, յերը զերանահատը փորձված չե և չունի համապատասխան պատրաստականություն, նա զերանահատում է վերջին ձեռք, վորովհետեւ այդ ձեռքի հեղա


և նրա համար: Ավելի շատ փորձառություն պահանջվում է զերանահատից այն ժամանակ, յերբ նա զերանահատում է ավելի թանգարժեք ծառեր, ինչպես, որինակ՝ կաղնին, լայնատերեր, հացենին, ընկուզենին, անփուտը և ալին: Յեթե զերանահատման լենթակա ծառն ունի վորոշ տարածության վրա լիսավածքներ (փոած և, ճեղքված, կամ ունի մեծ ծովածություն), անհրաժեշտ է դա հաշվի առնել, զերանի ընդհանուր յերկարությունից դուրս գալ և նոր սկսել զերանահատել: Ծառը վայր զցելուց հետո անմիջապես մաքրում են նրա ճյուղերը: Գերանահատը մոտենալով ճյուղերից մաքրված զերանին՝ սկսում է նշաններ անել նրա վրա, սկսած ընի կողմից, թե քանի տեղից և կտրվելու զերանը Այդ աշխատանքները զերանահատի կողմից կատարվելուց հետո բանվորները սղոցում են զերանն առանձին մուսերի՝ զերանահատի կողմից նշան արած տեղերից: Համեմատաբար ավելի հեշտ և կատարել վառելափակի պատրաստումը, վոր պահանջում է աշխատողից համեմատաբար քիչ հմտություն ու փորձառություն: Վառելափակը պատրաստվում է 0,5, մեկ և յերկու մետր յերկարությամբ, վառելափակի



Նկ. 12 և 13. Վառելափակի տարրեր ձեւի դասավորումը զտարելներում

պատրաստման ժամանակ պահանջվում է, վորովեսղի պատրաստված փայտը լինի միաշափ՝ առանց կարճ ու յերկարի, կամ, ինչպես առողջ են, լինի ստանդարտացին, վորովհետեւ զա, նախ հեշտացնում է փայտի հաշվառումը, և, յերկրորդ՝ փոխազրումը: Վառելափակի պատրաստման ժամանակ անհրաժեշտ է դործածել թե կացին և թե սղոց, վորովհետեւ այդ դործիքների միատեղ աշխատանքը տալիս է ավելի մեծ արդյունք, քան միամիտն կացինը կամ սղոցը: Վառելափակը ջարդելուց հետո անհրաժեշտ է զատավորել

շտարելներում կամ, ինչպես տուժ են, շտարելներ կազմելու վառելափայտն իրար վրա դարսելիս ինչքան կարելի յե ողետք և խիտ դասավորել, վորովեսպի նրանց արանքներում քիչ տարածություններ մնան: Անհրաժեշտ է տսել վոր կարճ ու հասու փայտերը շտարելում տալիս են ավելի շատ մասսա, քան յերկարներն ու բարձրակները (նկ. 12, 13): Փայտի պատրաստումից անտառում մնա-



սկսում ե չափել անտառում յեղած վառելափայտի շտարելները և շինափայտը։ Հիշյալ աշխատանքների ժամանակ տասնապետը պետք ե ուշադրություն դարձնի, վորպեսզի շտարելները խիտ և լավ դասավորված լինեն, բացի այդ, գերանների արանքները դրված լինեն հատուկ փայտեր։ Շինափայտն ընդունելիս տասնապետը պետք ե հետեւի գլխավորապես բրիգադների կողմից պատրաստված գերանների վորակին, թե վորքանով են պատրաստած գերանները համապատասխանում պահանջին։ Շինափայտի վորակը, մինչև նրա գործածելը, կախված ե նրա պահպանումից։ Անտառում պատրաստված շինափայտը (գերաններ, հանքասյուն, շալալներ), մինչև նրանց փոխադրումն անտառից, անհրաժեշտ ե դուրս հանել խուլ տեղերից և հավաքել անտառային բացատներում կամ հարմար միջնակետում։ Այդ գործողությունը կոչվում ե տրելյովկեա։ Շինափայտը միջնակետերում պահելիս անհրաժեշտ ե հատուկ ուշադրություն դարձնել նրա վրա և զերծ պահել փուլմից։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ ե գերանները պահել համեմատաբար չոր տեղերում, հաճախ ստուգել ու շուտ փոխադրել դեպի գործարան կամ յերկաթդի մոտ։ Նկատի ունենալով, վոր հաճարենին ավելի շուտ ե փչանում՝ ուստի այնպես պետք ե կազմակերպել հաճարենու փայտի հատումը, վոր կտրելուց հետո անմիջապես անտառից փոխադրվի դեպի արտադրություն։ Քիչ չեն պատահում, յերբ շինափայտի վատ խնամքից փչանում են գերանները, վորից տնտեսությունը խոշոր մնաման է կրում։ Տասնապետը հատուկ ուշադրություն պետք ե դարձնի դանաղան կետերում յեղած շինափայտի պահպանման վրա։ Շինափայտը յերկաթդի պլատֆորմներում ավելի մեծ խնամք է պահանջում, քան անտառում կամ միջնակետերում, վորովհետև պլատֆորմներում գտնվելու ժամանակ նա արեի և անձրեի տակ ավելի շուտ ե փչանում ու ճաքճքում, քան անտառում։ Դրա համար ել պահանջվում ե, վոր տասնապետը շինափայտը կայարան փոխադրի այն սլահին, յերբ նրան հատկացված են վաղոններ։ Գերանները բառնալու և սպառողին ուղարկելու համար։ Յերկար ժամանակով անտառում ու յերկաթդի կայարաններում չի թույլատրվում կուտակել մեծ քանակությամբ հաճարենու գերաններ։ Յերկաթդի պլատֆորմներում յեղած շինափայտը պետք ե կանոնավոր դասավորել իրար վրա և շաղ չտալ ամբողջ պլատֆորմում։ Նախ՝ դա հեշտացնում ե շարժումը պլատֆորմում ու քիչ տեղ ե գրավում, յերկրորդ՝ գերանները շտարելում ավելի

քիչ են փշանում։ Շինափայտը յերկաթգծի կայարաններում ընդունելիս անհրաժեշտ ե դասավորել ըստ տեսակների, վորպեսզի հետագայում հեշտ լինի նրա ուղարկումն ըստ սպառողների։ Կայարանում փայտ ընդունողը պետք ե դեկավարվի այն բոլոր հրահանգներով, վոր կենտրոնից տրված են նրան այդ ուղղությամբ։

IV. ՓԱՅՏԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ (ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ)

Անտառաշահագործման ասպարեզում փայտի փոխադրման աշխատանքները համարվում են ամենադժվարն ու ամենածանրը։ Յեթե փայտի հատման ժամանակ մեկ խորանարդ մետր փայտ պատրաստելու համար բանվորին տրվում է անհամեմատ ավելի քիչ աշխատավարձ, փայտի փոխադրման դեպքում նույն մեկ խոր. մետր շինափայտի փոխադրման համար տրվում է մի քանի անգամ ավելի, նայած ճանապարհին։ Դա բացատրվում է նրանով, վոր փայտի փոխադրման ժամանակ կոլտնտեսականը վոչ թե մենակ ե աշխատում, ինչպես փայտի հատման ժամանակ, այլ նա աշխատում ե իր սայլով և յեզներով։ Փայտի փոխադրման աշխատանքների դժվարությունն այն ե, վոր ծառը կտրելուց հետո անհրաժեշտ ե դուրս բերել հեռու վայրերից խոր ձորերով, լեռներով ու վատ ճանապարհներով։ Յեթե համեմատենք Անդըրկովկասի անտառաշահագործման պայմանները Խորհրդացին Միության անտառային այլ շրջանների հետ՝ կտեսնենք, վոր մեզ մոտ այդ աշխատանքներն անհամեմատ դժվար են։ Դա բացատրվում է նրանով, վոր մեր Միության անտառների մեծ մասը գտնվում է հարթավայրերում, վորտեղ փոխադրման պայմաններն ավելի հեշտ են, քան մեր լեռնային պայմաններում։ Մեր մի քանի անտառային շրջաններում (Շամշադին, Դսեղի շրջան և այլն), վորպեսզի կոլտնտեսականը մեկ խորանարդ մետր շինափայտ անտառից փոխադրի մինչև յերկաթգծի կայարանը, պետք ե կորցնի 1—2, նույնիսկ 3 աշխատ։ Փայտի փոխադրման աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ ե նախորոք պարզել հետեւյալ մոմենտները։

ա) վորքան շինափայտ և վառելափայտ ե փոխադրվելու։

բ) մինչև վոր կետն ե փոխադրվելու և ինչ հեռավորության վրա։

դ) հայրավոր և տրդյոք անոտում յեզած Հանուպարհներով փայտեղենը փոխադրել, թե անհրաժեշտ է նոր անոտուուղիներ անցնեցնել:

դ) Անձ սեռակի հանուպարհներ են անհրաժեշտ անցնեցնել և բանի կիրավեար:

ե) վրաքան քաշող ուժ է հարկավոր (յեզներ, ձիեր):

դ) փայտեղենի փոխադրություններն ապահովելու միջոցներով ավագ շրջանը վրաքան և ապահովագում և վորքանով և այդ ապահովում պլանի կտառումը և, վերջապես,

է) Անձուիս պրոթրոն մեջ և փայտապարտուման շրջանի սեփական պումակը, ինչքան քաշող ուժ ունի:

Հիշյալ պայմանները նախորոք պարզելուց հետո միմիայն կարելի յե կողմի ավագ շրջանի փայտի փոխադրման ճիշտ և սեղ պլանն ու նախառեակ պահանջվող՝ քաշող ուժի քանակը: Փայտի փոխադրման պլանը կողմի լուրջելուց հետո անողականորեն նա պետք է մասսայականացնի բանվորների մեջ ու հաշվի առնվեն նրանց պիտույքյունները:

Անուսար փայտեղենը փոխադրում են հետեւ միջոցներով:

1. սովորական ոյուղական սայլեթով (յերկու կոմ չորս ակնունիք):

2. բնականոր մեքենաներով:

3. որակատրություն (իրենց լովեաներով և սահմաներով):

4. փայտյա խողովակներով (սավերով):

5) վալրեջքներով (սորոններով):

6. յերկաթե լորերով (կանոսաներով):

7. բրեմորերզներով (վազանեականներով):

8. փայտյա ճանապարհներով:

9. սառցի ճանապարհներով:

10. ջրային ճանապարհներով:

11. յերկաթուղով և այլն:

12. ՓՈՕՏԵ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԳՅՈՒԳԱԿԱՆ ԱՌԵԱԲՈՅ:

Մեզ մոտ Հայտուանում փայտն անոտուից մինչև վերջնակառը (զործորոն, յերկաթուղօծի կայտրոն, շինորարական վայրեր և այլն) փոխադրում և ոյուղական սովորական սոլլերով և վուրդոններով: Այխառունքը կտառում է կոլտնառեականների և ան-

տառապարագան կազմովերսով յունիսի դումակների միջոցով, վերոնք փայտն անտառը փոխադրում են սայլերով մինչև վերջնական կետերը: Փայտի այդ տեսակ փոխադրումը համարվում է ամենահին ձեերից մեկը, վորովհետեւ դյուղական սայլերը վերցնում են ընդամենը 1—3 խորանարդ մետր վառելափակ և 0,3—0,7 խորանարդ մետր շինափայտ և անհամեմտատ դանդաղացրութեան Դյուղական քաջող ուժը նոլատականարմար և ողտադրծել անտառում և նրա միջոցով փայտեղենը դուրս քաշել մինչեւ ճանապարհների լեզրերը: Բացի դրանից, դյուղական սայլերը հնարավոր և ողտագործել ավելի կարև ճանապարհներում և այսուհեղ, վորտեղ փոխադրում մեխանիզմները հնարավորություն չունեն աշխատելու:

Փայտը հեռավոր վայրեր փոխադրելու համար անհրաժեշտ է ունենալ ապրանքատար ավտոմաքենաներ, տրակտորներ և այլն:

Հայտնատնի լեռնալին պայմանների ընույթին համապատասխան զանազան շրջաններում զյուղական սովորական սայլերն իրենց կառուցվածքով և բեռնատարությամբ թեե որիմիտիվ են, բայց զգալի չափով տարբերում են իրարից և հիմնականում այն կարելի յեւ բաժանել յերկու խմբի:

ա) չորս անիվանի յերկար և ընդարձակ սայլեր, վորոնց դործագրությունն ընդհանուր տամամը մասսայական չափերով կիրառվում և զաջաններում և ավելի շատ բեռ են վերցնում:

Չորս անիվանի սոլլեր շատ կան և նրանք հիմնականում տարբերվում են իրարից իրենց անիվների և սայլերի մասերի մեծությամբ:

բ) յերկանիվ սոլլեր, վորոնք տարբերվում են չորս անիվանի սոյլերից վոչ միայն իրենց անիվների թվով, այլև անիվների մեծությամբ և իրենց սոլլերի մասերի ձեռք: Այս ձեռք սոյլերի դործածությունն ընդհանուր տամամը տարածված և ավելի ընդգծված լեռնալին շրջաններում: Վորովհետեւ մեր փայտափոխադրման աշխատանքների մեծագույն մասն անտառադիների և ավելի կատարելագործված փոխադրական միջոցների բացակալության հետեանքով կատարվում է սովորական սայլերով, անհրաժեշտ է, վոր այդ միջոցն ոգտագործվի լրիվ և սացիոնալ կերպով: Նրա համար հարկավոր է, վոր փայտափոխադրմանը դրագվող կազմակերպությունները ժամանակին նախապատրաստեն և ունենան սոյլերի զանազան մասեր՝ պլանները ժամանակին կատարելու համար:

2. ՓԱՅՏԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆ ԱՊՐԱՆՔԱԾՈՐ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՎ

Փայտի փոխադրումը կատարվում է բեռնատար մեքենաներով։ Այնքան, վորքան մեքենայով հնարավոր չե խոր անտառից փայտն արտահանել (անտառում համապատասխան ճռնապարհներ չլինելու պատճավով), դրա համար, նախ՝ գյուղական սովորական սայլերով փայտը դուրս են հանում մինչև միջնակետերը, անտառային բացատները և գլխավոր ճանապարհների մոտերը, հետո այնտեղից մինչև յերկաթզծի ճանապարհները փոխադրում են բեռնատար մեքենաներով։ Փայտի փոխադրման այդ ձեր կոչվում ե համակցված փոխադրման ձև, վորովհետև ճանապարհի մի մասը փայտը փոխադրվում է սայլով, իսկ մյուսը՝ մեքենայով։ Մեքենաներով փայտ փոխադրելիս պետք է պահել հատուկ բարձրադիրների և դատարկողների բանվորական բրիգադներ, վորոնք անընդհատ պետք է զրադիր այդ աշխատանքներով։ Մի մեքենան փայտի փոխադրման աշխատանքներում չի կարող տալ այն արդյունքը, ինչ վոր մի քանիսը, վորովհետև մեքենաները պահելու և լավ շահագործելու համար անհրաժեշտ է ունենալ հատուկ արհեստանոցներ, զարաժներու պահեստի մասեր, իսկ այդ բոլորը նպատակահարմար չե կատարել միայն մի մեքենա ունենալու դեպքում, վորովհետև բարձրացնում է փայտի ինքնարժեքը և մեքենայի աշխատանքը դարձնում է անարդյունավետ։ Այժմ փայտի փոխադրման ասպարիզում Խորհրդային Միությունում աշխատում են հազարավոր բեռնատար մեքենաներ և յուրաքանչյուր տարի նրանց թիվը ավելանում է։ Մեքենան խոշոր չափով արագացնում է փայտի փոխադրման աշխատանքները՝ բարձրացնում և արտադրողականությունը, իջեցնում և ինքնարժեքը, հեշտացնում և աշխատանքի պրոցեսները և ապահովում և ժամանակին պլանների կատարումը։ Այսպես, որինակ՝ յերեք տոննանոց մի բեռնատար մեքենա իր աշխատանքով կարող է փոխարինել 20—25 գյուղական սայլի։ Մեքենաներով կարելի յե փոխադրել գերան, տախտակ, հանքասյուն, վառելափայտ, ածուխ և այլն։

Բեռնատար ավտոմեքենաներով գերաններ փոխադրելիս պետք է զերանները շղթաներով ամուր կապել մեքենային՝ շարժման ժամանակ ցնցումներ չառաջանալու նպատակով։

Յերկար գերաններ, հեռագրասյուններ և այլ ասորտիմենտներ փոխադրելու համար ավտոմեքենայի հետեւից կապում են լաֆետներ կամ հավելված անիմսներ՝ իրենց սոնիներով։ Այս դեպքում

փոխադրվող փայտանյութերի մի ծալը կապվում է մեքենայի առաջի մասին, իսկ մյուս մասը՝ լաֆետի կամ կցված անիվների սռնուն: Շատ հաճախ փոխադրվող գերանները բարձում են լաֆետների վրա և ավտոմեքենան միայն քաշում է բեռնված լաֆետը:

3. ՓԱՅՏԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ՏՐԱԿՏՈՐՆԵՐՈՎ

Բացի ավտոմեքենաներից, փայտի փոխադրման ասպարեզում խոշոր դեր կարող են խաղալ տրակտորները: Փայտի փոխադրումը տրակտորներով կատարում են հետևյալ կերպ. տրակտորների հետևից կապում են մի կամ միքանի լաֆետ, նայած ճանապարհի դրության և տրակտորի քաշելու ունակության: Մեր պայմաններում լավ կաշխատեն թրթուրավոր տրակտորները: Մեր լեռնային պայմաններում տրակտորի հետևից կարելի յե կապել մեկ, կամ ամենաշատը՝ յերկու լաֆետ: Ամենամեծ խոչնդությունը, վորթույլ չի տալիս յերկուսից ավելին կապել, մեր անտառային վատ ճանապարհներն են, վորոնք ունեն բազմաթիվ նեղ շրջապտույտներ: Չնայած այդ բոլոր դժվարություններին, այնուամենայնիվ այնտեղ, վորտեղ պայմանները թույլ են տալիս, անհրաժեշտ ե կազմակերպել հատուկ տրակտորային բազա՝ փայտի փոխադրման համար: Շամշադնի Վելի գյուղից մինչև Աղստաֆակայարանը, Սաղախլվի Սալկուտ միջնակայանից մինչև Սաղախլոկայարանը տրակտորներն ազատ կերպով իրենց լաֆետներով կարող են աշխատել: Մեկ տրակտորը յերկու լաֆետով կարող է փոխարինել 12—15 գյուղական սայլի:


Փայտի փոխադրումների համար ընդհանուր առնամբ պիտանի յեն բոլոր սիստեմի տրակտորները, նայած ճանապարհների դրության:

Սակայն մեր լեռնային պայմաններին ամենից շատ համապատասխանում են թրթուրավոր սիստեմի տրակտորները, վորովհետեւ դրանք ավելի հարմարեցված են վայրեջքների և վերելքների, ավելի ուժեղ են և ամենավատ ճանապարհներում անգամ լավ են աշխատում, շնորհիվ իրենց անիվների յուրահատուկ կառուցվածքի:

4. ՓԱՅՏԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ՆԱՎԵՐՈՎ (ԽՐԱՎԱԿՆԵՐՈՎ)


Լեռնային և կիսալեռնային յերկրներում, վորտեղ անտառուղիների կառուցումն ավելի թանգ ե նստում և տեղի աշխար-

հազրական պիրքը թույլ չի տալիս կառուցի սփառական առջի
շահագործներ, որոպես պիտիրում դիմում են հատուկ նովեր
և այլ նովերով (ջրի ժեղողով) փոխազրում վայար (նկ. 15 և 16):
Ենթայ նովերը (խոզագակները) դիմում են սփառական եւս
պերաներից եւս առխոտակներից: Տախտակներից դիմում նովերը:



Նկ. 15. Տախտակներից պատրաստված
իր նով

Այս և հավաքում նովի վերջուած: Նովի ամբողջ յերկարու-
թյունը նշանակում է միքանիք բանվոր; Վերաբեր միտ սուսում են
այս աշխատանքները ու մաքրում նովերի չափութեան նովերի լայնու-
թյունը լինուած է կե-
տերից մեջ մեկ
մերը; յերկարությու-
նը կարող է լինել մաք-
րություն ու սուսում ու սու-
սում: Արտյիք նովերով
պարագրուած են նով
պատրաստված և մաքր




Այս և կառաներից պատրաստված իր նով
ը համար պատճեն է ապեկի կարք; 200—300 մետր յերկարություն
անեցնակ նովեր, վերաբեր պատճեն ապեկի է առանձին Մեկ
մեր: Հայտառանուած նովի առներով մեծ քանաքերությունը բնու-
թյունը ու ձևակերպությունը նովերը հայտառանուած է պատճենի
կարքը նովերի կարքայրեկ վայար: Վայարի վերաբեր պատճեն նովեր-
ով ու համար պատճեն է նովեր (չ=3 անդամ), դան պատճենի
առներով: Բայց պատճենը, պատճեն է դա պատճենի առներում:


քաղաք թեկան ուժի թե հարթագոյին Միավորության տարրեր անուա-
ռաջակազմութման շրջանակություն և թե պրոտոռահանություն մեծ չա-
փակ փայտի վախութութը նազերով և կառարվութ:

Տ. ԳՈՅՑԻ ԳՈՒԱԾ/ԵՐԵՒԱՆ ՎԱՐԴԱՐԵՐՈՒԹ (ՍՊՐԱՆԿՈՒԹ)

Այս անտառաշնչակարծման շրջանակութ, վարսեղ անտառ-
ները պահպան են վոչ թե հարթագոյրերութ, այլ լինային և
կրաքարային տեղե-
րութը կամ ավար-
դեալը բայց բայց կա-
տարվութ և բնական
անտառային վայրեցք-
ներով Ենչուս հայտ-
նի յէ, մեր լեռնային
վայրերութ, վարսեղ
անութ են անտառները,
զայտին ունեն բազ
մաթիվ ձորեր, վարսեղ



Նկ. 17. Վերեբը փայտ իջեցնող նազ
հաներ անօրը




Նկ. 18. Կափ, վարե միջնավանդնեց ծրի վերեբից ներքի ևն իջեցնութ փայտը
հաւեր վարե ինչ բարեբից ձաքրելուց հետո կորիւի յէ ոպտա-
պարծել փայտի իջեցման համար: Մեզնից պիս հարյուրավոր

առարիներ առաջ զյուղացիներն ալդ բնական վայրեջքներով փռ-
խաղրել են իրենց կարիքների համար մեծ քանակությամբ փայ-
տեղնու վայրեջքների միջոցով փայտի իջեցման—փոխադրման ձեր
համարվում եւ ամենաալրիմիտիվ և ամենաեժան ձեւը մեկը:


Վայրեջքներով փայտն իջեցնելիս պետք է աշխատել ընտրել
այնպիսի ձորեր, վորոնք քիչ թեք են ($20-25^{\circ}$), վորովհետեւ մեծ թե-
քության ժամանակ գերաններն իջեցնելիս ջարդվում ու փշանում
են: Վայրեջքներով նպատակահարժար եւ իջեցնել վառելափայտը
և ուրիշ ասորտիմենտներ (հանքասլուն, շալալ և այլն): Իսկ թան-
չարժեք գերանները չեւ թույլատրվում բնական վայրեջքներով
իջեցնել, վորովհետեւ իջնելիս կոլչում են քարերին, մեխանիկա-
կան վնասվածքներ ստանում ու կորցնում իրենց տեխնիկական
հատկությունները: Շատ տեղերում վայրեջքի ամրող յերկա-
րությամբ գերաններից նավ են շինուած (նկ. 17 և 18) և այդ նա-
վերով իջեցնում փայտեղենը: Այդ դեպքում, ճիշտ եւ, վայրեջք
պատրաստելը թանգ եւ նստում, բայց և այնպիս գերաններն
իջեցնելիս անհամեմատ քիչ են փշանում: Մեզ մոտ նման նավեր
հնարավոր եւ շինել, քանի վոր դրանք այնքան ել թանգ չեն լի-
նում, վորովհետեւ դրանց հիմնական նյութը՝ փայտեղենը՝ եժան և
տեղումն եւ դանվում:

6. ՓԱՅՏԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ՑԵՎ ԻՉԵՑՈՒՄԸ ՅԵՐԿԱԹՈԼԱՐԵՐԸ (ԿԱՆԱՏՆԵՐՈՎ)


Ա Առաջին վայրերում, վորտեղ խոր ձորերում վոչ մի այլ
տեսուկի ճանապարհ չեւ կարելի անցկացնել կամ նրանց կառու-
ցումը շտու թանգ ենստում, փայտը սարերի լանջերից իջեցնում
են յերկաթալարերով (նկ. 19 և 20): Անտառում յերկաթալա-
րերն ամրացվում են հատուկ յերկաթե ողերով մեծ ծառերին,
վորոնց ճյուղերը կտրում, կամ կանգնեցնում են ոլուներ: Հետո՝
յերկաթալարերի վրայով ոռվիկներով իջեցնում գերանները վերից
գար: Դերաններն իջեցնում են յերկու յերկաթալարով: Կարելի
չեւ իջեցնել նաև մի յերկաթալարով: Առաջին դեպքում անհրա-
ժեշտ եւ յերկու դերանների հանդիպման տեղում ունենալ բաժտն-
ման կետ (նկ. 21): Յերկաթալարի վայրեջքներին որվում
եւ $20-30$ աստիճան թերություն: Յերկաթալարերը կարելի յե-
նաւուի $8-12$ մմ հաստություն ունեցող բարակ յերկաթալարերից:



Նկ. 19. Փայտի իջևումը յերկաթալարերով (սերքեի մասում)



Նկ. 20. Փայտի իջևումը յերկաթիւա լարերով (վերի մասում)



Ալ. 21. Յերկաթալարի կայան (սլաք)


7. ՓԱԾՏԻ ԵԶԵՑՈՒՄԸ ԹԵՇՄԱԲՐԴՈՎ.

Փայտեղենը կարելի յե իջեցնել լեռների բարձր զաղաթներից նոև այսպես կոչված բրեմորերդով։ Բրեմորերդը մի ժեքենայական սարքավորում է, վորի միջոցով, հասուկ վազոնեալաներով փայտեղենն իջեցնում են վերից վար։ Բրեմորերդը նույնպես վալրեջը է, միայն ավելի կատարելազործված և մեքենայացված, քան մյասս տեսակի վալրեջքները։ Բրեմորերդը տարբերում է յերկաթալարային ճանապարհից նրանով, վոր նա ունի յերկաթալարի փոխարեն նեղ յերկաթյա զծեր, վորոնց հասուկ սարքավորումների շնորհիվ (վազոնեալաներով) իջեցվում է փայտեղենը։ Անշատ բրեմորերդն ավելի թանգարծեք սարքավորում է և ողոհանջում և ավելի վորակյալ տեխնիկական կողը։ Բրեմորերդի յերկարությունը կարող է տարբեր լինել նոյնած տեղի դիրքին ու ուսյմաններին։ Ալահվերդու շրջանի Ախմալալի անտառամասում (Տաշտանորում) կառուցված բրեմորերդն ունի մոտ 1200 մետր յերկարություն, վորը բաղկացած է 2 բրեմորերդներից՝ ներքեին և վերեին։ Ախմալալի բրեմորերդն որակոն կարող է իջեցնել 60—70 խոր, մետր վառելափական կամ 25—30 մետր շինափայտ։ Հիշյալ բրեմորերդը շահազործման մեջ է ահա 3 տարի և խոշոր չափով ոգնում է փայտի իջեցման աշխատանքների։

8. ՓԱԾՏԻ ՓՈԽԱԿՐԻՄԸ ՓԱԾՏԸ ՀԱՆԱՊԱՐՀԱՅԻՆԸ

Անտառաշահազործման շատ վայրերում փայտը փոխադրում են փայտյա ճանապարհներով կամ, ինչողես անվանում են, լիժըն-

ցողիւներով։ Այդ անունը ճանապարհի տունձնահատկություններին է, վոր նրա սելսերը վոչ թե լերկաթից են, այլ փայտից։ Խոշոր շավով փայտյա ճանապարհներ դոյտթյուն ունեն Առերիկայի Միացյալ Նահանգներում զեռ 1886 թվականներից, վարոնց ընդհանուր լերկարությունը հասնում է հազարավոր կիլոմետրների։ Այժմ Խորհրդային Միության անտառային շատ շրջաններում, վորտեղ խոշոր շավերով անտառաշահագործման աշխատանքներ են տարվում, իսկ շավով տարածված են այդ տիպի ճանապարհները, վորոնցով տարեկան փոխադրվում է միլիոնավոր խորանարդ մետր փայտեղին։ Շատ հաճախ փայտեղներ փայտյա ճանապարհներով փոխադրվում են անտառից մինչև վերջնակետը՝ հատուել վագոնեաներով կամ լաֆեաներով (նկ. 22)։



Նկ. 22. Լաֆեաների անիջները հարմարեցված են փայտյա ճանապարհներին
Նման ճանապարհներ հնարավոր ե անցկացնել անտառային հետեւյալ շրջաններում։ Ախթալայում—բրեմորերդի սոսից մինչև Ախթալա կայտրանը, Շամշադնում Վելի դյուղից մինչև Ազուաքա կայտրանը, Սաղախուտի փայտապարաստման շրջանում «Սալկուտից» մինչև Սաղախուտ կայտրանը և այլն, վորտեղ ցեխ լինելու պատճառով հաճախ դժվարանում են փայտի փոխադրման աշխատանքները։ Այդ ճանապարհների կառուցումը մեղնում այնքան ել թանգ չի արժենա, վորովհետեւ գրանց կառուցման համար պահանջվող հիմնական նյութը՝ փայտեղներ հենց տեղումն են շատ եման են։

Այդ ճանապարհներով հնարավոր ե փայտի փոխադրումը համարյա տմբողջ տարվա ընթացքում։ Փայտեղներ փայտյա ճանապարհներով փոխադրում են ձիով, վորը կարող է քաշել 2—3 բարձրած վագոնեակա կամ լաֆեա ու փոխադրել որական վոչ պահանջման 30—40 խորանարդ մետր փայտ։ այդ ճանապարհները շինուած են արտօնություն, վորտեղով ցանկանում են անցկաց-

Նել փայտյա ճանապարհը, նախորոք հ սրթում են յեղած սայլու-
ղին, վորպեսզի նա չխանգարի սայլերի յերթևեկությունը, ու շա-
բում միջին հաստության շղալներ, վորոնց վրայով անց են կաց-
նում փայտյա գծերն ու պինդ



Նկ. 23. Փայտի գծերի ամրացումը
կոճափայտի հետ

շալժմ աշխատում են մեծ քանակությամբ այդպիսի շոգե-
շալժեր:

9. ՓԱՅՏԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ՍԱՌՅԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՈՎ

Խորհրդակին Միության չատ վայրերում ձմեռ ժամանակ փայտը փոխադրում են սառցային ճանապարհներով: Անտառային այլ ճանապարհների համեմատությամբ այդ ճանապարհների առավելությունն այն է, վոր ունենալով հարթ և սահուն մակերես՝ հեշտացնում ու տրագացնում են փայտի փոխադրումը: Սառցային ճանապարհները շինում են հետեւյալ կերպ. ձմրանը՝ սաստիկ ցրտերի ժամանակ, յերբ ձյունը դեռ խոր շերտ չի կազմել ջրում են այն ճանապարհները, վորոնք սպասարկելու յեն փայտի փո-
խադրման աշխատանքներին, ապա սահսակների լայնության չափով, վորտեղով վոր անցնելու յեն սահսակների վոտքերը, կամաց-կամաց ջուր լցնելով հաստացնում են սառցի շերտը և ստացվում են սառցագծեր, իսկ յերկու գծերի մեջ լցնում են ձյուն վորի վրայով քայլում ե ձին և այդ ճանապարհներով՝ սահսակների միջոցով փոխադրում են փայտը: Նման ճանապարհներ շինում են ԽՍՀՄ-ի այն փայտապատրաստման շրջաններում, վորտեղ յերկար ձմեռ ե լինում և սաստիկ ցրտեր:

Մեզ մոտ՝ Հայստանում նման ճանապարհների կառուցումը նպատակահարմար չե, վորովհետեւ մեր անտառները գտնվում են բարձր լեռներում և նման ճանապարհների կառուցումը հնարա-
վոր չե թե աշխարհագրական և թե կլիմայական պայմանների տեսակետից:

10. ՓԱՅՏԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԶԲ : ՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Փայտեղենը կարելի յե մի տեղից մյուսը, կամ մի յերկրից մյուսը փոխադրել ջրային ճանապարհներով՝ խոշոր գետերով, ծովերով, ովկիանոսներով։ Փոխադրումները կատարվում են յերկու ձեռվ։

ա) շոգենավերով և

բ) լաստագնացությամբ։

Զրով փոխադրելիս գերանները վորոշ կարգով դարսում են, շտարելներ կազմում և վերջիններս կապում մեկը մյուսից։ Այնտեղ, վորտեղ ցանկանում են կանգնեցնել փայտը, կառուցում են փայտ կանգնեցնելու հատուկ կայաններ և բանվորական բրիգադների միջոցով դուրս հանում փայտեղենը ջրից։ Ամեն տարի վոլգա, Դոն, Դնեպր և այլ բազմաթիվ գետերով մեր Միության տարրեր անտառային շրջաններից փոխադրվում են միլիոնավոր խ. մետր փայտեղեն։ Փայտի փոխադրումը ջրով, համեմատած մյուս տեսակի փոխադրման ձևերի հետ, ամենից եժան և նստում։ Բացի շինափայտից, ջրով կարելի յե փոխադրել նաև մեծ քանակութեամբ վառելափայտ։ Հայաստանում կան գետեր, ինչպես Դերետ չայը, Հասանսուն և այլն, վորոնցով նույնպես հնարավոր են կազմակերպել վառելափայտի փոխադրում։

Շոգենավերով փայտը փոխադրում են տյղ նպատակի համար կառուցված անտառատար նավերով։

11. ՓԱՅՏԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ՅԵՐԿԱԹԳԾՈՎ.

Վերջապես, փայտի փոխադրումը կարելի յե կատարել յերկաթղծով՝ վագոններով։ Յերկաթղիծ են անցկացնում այնպիսի անտառային շրջաններում, վորտեղ պատրաստվում են մեծ քանակությամբ փայտեղեն, և շահագործումը կարելի յե կատարել յերկար ժամանակ։ Հատուկ յերկաթղծի անցկացումը ձեռնուու չե այն վայրերում, վորտեղ համեմատաբար քիչ փայտեղին ե պատրաստվում և քիչ պաշար կա։

V. ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ԶԵՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՓԱՅՏԱՄԱՏՐԱՍՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մինչև այժմ անտառաշահագործման մի շարք վայրերում, ինչպես նաև մեզ մոտ՝ Հայաստանում փայտապատրաստման աշ-

